են որպէս միանձնեայ իշխանութիւններ եւ գործելով այս կամ այն քաղաքում, կախումն ունին նահանգի պետից: Սակայն դա չի խանգարում, որ կոլլեգիաներից իւրաքանչիւրը լինի պետական կեանքի ճիւղերից մէկն ու մէկի վարիչը կամ կարգադրիչը:

Աւելորդ չենք համարում բերել այստեղ կոլլեգիաների գործունէութեան համառօտ պատկերը, որպէսզի կարողանանք ցոյց տալ, թէ մեր հեղինակը ընդհանրապէս ի՞նչպէս է իրեն պատկերացնում անկախ Հայաստանի պետական կազմակերպութիւնը.—

1. Լրտեսապետութիւն կամ լրտես պետութեան. խաղաղ ժամանակի շտատը 12 հոգուց է բաղկացած, իսկ պատերազմի ժամանակ՝ 36 հոգուց: Լրտեսները զգուշութեամբ պէտք է շրջին, ինչպէս Հայաստանում, այնպէս էլ թշնամիների երկրում եւ լրտեսեն: Նրանց տուած տեղեկութիւններից լրտեսապետը ամէն շաբաթ կազմում է մանրամասն տեղեկագիր, որից մէկ օրինակը յանձնւում է նահանգի կուսակալին, միւսն ուղարկւում է Ազգ. Ժողովին, իսկ երրորդը՝ հանր. նախագահի ծածուկ խորհրդին: Փակ պիտի լինեն լրտեսապետի բերանն ու ձեռները, որպէսզի ոչ մի գաղտնիք նա չխօսի կամ չգրի որեւէ մէկին, բացի վերոյիշեալ երեք հիմնարկութիւններից (կե):

2. Զինապետութիւն. զինապետից — օրինակ՝ Անիի զինապետից — պահանջւում է՝ պահել զէնքերը մաքուր եւ իւղով ծծուած, բոլոր կոտրած ու փչացած մասերը շինած-պատրաստ: Նա իր պահեստներում պատրաստ պիտի ունենայ «թվանգ —վաթսուն հազար, թափանջայ — վաթսուն հազար եւ սուրեր — վաթսուն հազար»: Եթէ անհրաժեշտութեան դէպքում որոշ քանակութեամբ դուրս տրուի պահեստներից, պակասորդն անմիջապէս պիտի լրացուի, որպէսզի զինապահեստներում միշտ լինի առ ձեռն առնուազը «24,000 հատ հրացան, 12,000 թափանջայ եւ 60,000 սուսեր»: Զինապետն իր բիւրոյէն ստանում է նահանգի պետից (կզ):

3. Վառօդապետութիւն. վառօդապետը հսկում է երկրի բոլոր վառօդ պատրաստողների վրայ եւ աշխատում է, որ բոլոր վառօդները պատրաստուին մաքուր եւ լաւագոյն յատկութեամբ — չուտ չփչացող եւ «համահաւասար կարողութեամբ, այսինքն՝ միեւնոյն ոյժն ունեցող: Ամբողջ Հայաստանում նա պիտի պատրաստել տայ միայն երկու տեսակ վառօդ, «ոչ յաւելի կամ պակաս»,— մէկը խոշոր, «վասն թօփի», միւսը մանր՝ «վասն աղզօթի»: Նա պիտի հետեւի զարգացնելու վառօդի արդիւնաբերութիւնը մեր երկրում — թէ՝ քանակով եւ թէ որակով, մանաւանդ որակով, որպէսզի մնայ «անչիջանելի փիլթայն եթէ ի ժամանակի տապու եւ կամ ի ժամանակի թոռութեան, ցօղի եւ անձրեւի»: Վառօդը պէտք է պահուի ապահով վայրերում — թէ՛ քաղաքներում, թէ՛ բաց դաշտում եւ թէ՛ զօրքի մէջ (կէ):

4. Կառապետութիւն. պարտականութիւնն է՝ զարգացնել կառաշինութեան արհեստը Հայաստանում եւ պատրաստել տալ հարկաւոր չափով կառքեր՝ թնդանօթ, վառօդ, ռումբեր եւ զօրքի պարէնը փոխադրելու համար: Իւրաքանչիւր նպատակի համար յատկացրած բոլոր կառքերը պէտք է լինին միեւնոյն տեսակի, միեւնոյն մեծութեան եւ միեւնոյն չափի, որպէսզի մասերից մէկն ու մէկը կոտրուելու կամ փչանալու դէպքում՝ միւսի նոյն մասը կարելի լինի անմիջապէս տեղը դնել (կը):

5. Վրանապետութիւն. վրանապետը պիտի հետեւի վրանագործութեան արհեստին ամբողջ Հայաստանում: Զօրքի համար հարկաւոր վրանները նա միշտ պատրաստ պիտի ունենայ եւ հետեւի, որ բոլոր վրանները լինին չորս տեսակի — մէկ մարդու համար, վեց մարդու համար, 12 մարդու համար եւ 24 մարդու համար: Իւրաքանչիւր տեսակի բոլոր վրանները լինին իրար հաւասար՝ իրենց բարձրութեամբ, լայնութեամբ եւ երկարութեամբ: Նմանապէս սիւները, սիւների գլուխները եւ պարանները հաւասար. վրանների ներսը ըստ պիտակ, դուրսը կարմիր: Միայն «ծայրագոյն» իշխանների վրանները կարող են լինել «բեհեզեայ եւ լայնատարած» (կթ):

6. Կերակրապետութիւն. մօտաւորապէս նման է մեր երկրագործութեան եւ գիւղատնտեսութեան նախարարութեան: Պաշտօնն է՝ հետեւել, որ բոլոր հողերը ցանուեն եւ մի քայլ